1 0 DEC 2017

# ՀՐԱՄԱՆ

## ԿԿԲ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՔԱՂ. ԹԻՖԼԻՍ №16 6 ՄԱՐՏԻ 1933 Թ.

§ 1.

ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵՋ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՅԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԲԱԳՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԿԲ–ՀՌԽ ՄԱՐՏԻ 10–ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 10-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԲԱՆԱԿԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ԶՈՐԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐ-

ՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ, ԼՐԻՎ ՈՒ ՎՈՐԱԿՈՎ ԲԱՐՁՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ։

§ 2.

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԿԿԲ ԲՈԼՈՐ ԶՈՐԱՄԱՍԵՐՆ ՈՒ ԲՈԼՈՐ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

§ 3.

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՁԱՓՈՎ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՄԱՍՍԱՅԻՆ ՈՒ ՊԵՏԿԱԶՄԻՆ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱՐԱԿԻՑ «ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ»։

ԱՅԴ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՆՈՒՅՆՊԵՍ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ։

§ 4.

ԳՆԴԵՐԻ ՈՒ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ-



1-329 Тд

ՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵՆ ԿԿԲ ՇՏԱԲՆ ՈՒ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅԻՍԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ 20-Ը, ԻՍԿ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ՝ ԳՆԴԵՐԻ ՈՒ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԸ՝ ՄԻՆՉԵՎ Ս. Թ. ՄԱՅԻՍԻ 10-Ը։

§ 5.

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ։

Զորքերի ժամանակավոր հրամատար՝ ՍՈԿՈԼՈՎ

ՀՌԽ անդամ՝ ՇԻՖՐԵՍ

---

## ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ՛Ն 1933 Թ. ՁՄՌԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Ժամանակն է՝ 1933 թվի մարտի 10-ից մինչև մայիսի 10-ը։*

### Ա. ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՔԱՂՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Բոլոր զորամասերի բոլոր մարտիկների ու պետկազմի համար

1. *Համկոմկուսի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ-ի հունվարյան պլենումի վորոշումների գերազանց յուրացում։*

2. *ԽՍՀՄ Կենտգործկոմի 3-րդ նըստաշրջանի և ԱՍՖԽՀ Կենտգործկոմի փետրվարյան նստաշրջանի (ազգային դիվիզիաների համար) վորոշումների գերազանց յուրացում։*



3. *Կոլտնտեսականների համամիութենական համագումարի դիմումի և համագումարում արտասանած՝ ընկ. ընկ. Ստալինի, Կագանովիչի, Մոլոտովի, Վորոշիլովի, Յակովլևի ճառերի գերազանց յուրացումը։*

4. *Թերթի ամենորյա ընթերցում։ Միջազգային ու ներքին հիմնական քաղաքական անցքերի գերազանց յուրացում։*

5. *Ակտիվ մասնակցություն գարնանացանի կամպանիային։*

*Բացի դրանից,*

### 2. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. *Քաղպարապմունքների ձմռան ծրագրի գերազանց յուրացում։*

2. *Ակտիվ աշխատանք լենանկյունում. մասնակցություն լենանկյան սարքավորման, ալբոմներ կազմելու, թերթեր կարելու բրիգադներում, մասնակցություն ինքնագործոն գեղարվեստական աշխատանքում, մասնակցություն լենանկյան մասսայա-*

կան աշխատանքում: Մասնակցություն խմբակների աշխատանքներում:

3. Կիսագրագիտության վերացում և հանրակրթական պատրաստության ծրագրի լավ յուրացում:

### 3. ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

1. Քաղպարապմունքների սեմինարի բոլոր թեմաների գերազանց յուրացում:

2. Քաղպարապմունքների համար կարմիր բանակայինների ինքնապատրաստության լավ կազմակերպում ու անցկացում և ինքնապատրաստությունից բոլոր առաջադրությունների լավ կատարում:

3. Իր ջոկի կարմիր բանակայինների համար թերթի սիստեմատիկ ընթերցում:

4. Իր ջոկի յուրաքանչյուր կարմիր բանակայինի, նրա սոցիալական դրության, պահանջների ու տրամադրությունների գերազանց ճանաչում:

5. Իր ջոկի կարմիր բանակայիններին բոլոր վոչ պարզ հարցերի սիստեմատիկ պարզաբանում:

6. Կանոնավոր կերպով պլանը մարտիկին հասցնել և սիստեմաբար ղեկավարել ջոկի ու կարմիր բանակայինների սոցմրցակցությունը:

7. Ակտիվ աշխատանքը լենանկյունում և իլյիչովկայում (ղեկավարել խմբակներին, անցկացնել զրույցներ, խաղեր, սարքավորել լենանկյունները և այլն):

### Բ. ՇԱՐԱՅԻՆ ՈՒ ՖԻԶ-ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Մինչև ձմրան վերջը հասնել նրան, վոր լիովին մշակված լինի անհատ մարտիկը, վորն արագ, ճարտարորեն, ձեռներեց կերպով կատարի իր պարտականությունները թե՛ շարքում և թե՛ շարքից դուրս:

2. Հասնել նրան, վոր գերազանց կեցվածք լինի, ստույգ՝ կատարվեն հրամանները (կոմանդաները) և պետերի կարգադրությունները:

3. Հասնել՝ պետին օրինակելիորեն մոտենալուն, հրամանը կրկնելուն, կատարման մասին զեկուցելուն, դարձումների ու հրացանային հնարքները կատարելուն։

4. Հասնել սվինի շեշտակի, ուժեղ ու դիպուկ հարվածին։

5. Հասնել նրան, որ ճարտարությամբ ու ճարպկորեն հաղթահարվեն այն բոլոր խոչընդոտներն ու արգելքները, որոնց կարելի յե հանդիպել մարտական պարագայում շարժման ժամանակ։

6. Գործիքների վրա աշխատանքում հասնել նրան, որ օրինակելիորեն մոտենան գործիքին, կատարեն նվագը և հեռանան գործիքից։

7. Հասնել «Պատրաստ աշխատանքի ու պաշտպանության» նշան ստանալուն։

**ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ** համար ծավալը նույնն է. բացի դրանից՝ կարողանալ վոչ պակաս քան «լավ» գնահատականով ցույց տալ անձամբ և սովորեցնել իր ստորադրյալներին։



## Գ. ՀՐԱՁԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Մինչև ձմրան ուսուցման վերջը տիրապետել վոչ պակաս, քան «գերազանց» գնահատակով.—

ա) ՀՐԱՁԻԳՆԵՐԻՆ — հրացանով 4 խնդիրներին և նռնանետման մեկ խնդրին։

բ) ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐՈՐԴՆԵՐԻՆ — ձեռքի գնդացրով 4 խնդրին։

գ) ՀԱՍՏՈՑԱՎՈՐ ԳՆԴԱՑՐՈՐԴՆԵՐԻՆ — հաստոցավոր գնդացրով. 4 խնդրին։

դ) ՀՐԱՅԱՆԱՅԻՆ ՆՌՆԱՁԻԳՆԵՐԻՆ — հրացանային նռնակներով հրաձգության 1 առաջադրությանը։

ե) ՍՆԱՅՊԵՐՆԵՐԻՆ — դասակավորմանը (կլասիֆիկացիային)։

զ) ՆՈՐՄԱԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻՆ— մշակել 4 խնդիր հրաձգային զենքի բոլոր տեսակներով (բացի առաջին կուրսի կուրսանտներից, վորոնք մշակում են 2 խնդիր 1932 թվի հրաձգության կուրսից լրացուցիչ ցուցումներով. «Նախա-

նով» լավագույն հրաձիգների 30 տոկոսը պետք է մշակեն 4 խնդիր, մնացածը՝ 3 խնդիր):

է) ԿԱՊԱՎՈՐ մարտիկներին՝ մշակել 2 խնդիր հրացանով 1932 թվի հրաձգությունների կուրսից:

ը) ՍԱՊՅՈՐ մարտիկներին — նույնը:

թ) ԽԻՄԻԿ մարտիկներին — նույնը:

ժ) ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ մարտիկներին — 2 խնդիր հրացանով:

ի) ԱՎՏՈԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՈՒ ՀՐԵՏԱՎՈՐՆԵՐԻՆ — 2 խնդիր հրացանով:

լ) Սպառազինման համար սահմանված զենքի գերազանց խնամում, պահպանում, պահում ու դրություն:

ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ — ծավալը նույնն է և բացի դրանից, նրանք պետք է կարողանան վոչ պակաս, քան «լավ» գնահատականով ցույց տալ անձամբ և սովորեցնել իրենց ստորադրյալներին:



## Դ. ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Մինչև ձմրան շրջանի վերջը վոչ պակաս, քան «լավ» գնահատականով տալ քննություն (զաչոտ) մարտիկի համար սահմանված ծավալով.—

ա) յերթից ու նրա պահպանությունից.

բ) պաշտպանությունից.

գ) հարձակումից.

դ) հետախուզությունից:

ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ նույն խնդիրներն են, ինչ ջոկի համար. բացի դրանից, նրանք պետք է կարողանան վոչ պակաս, քան «լավ» գնահատականով ցույց տալ անձամբ և սովորեցնել իրենց ստորադրյալներին մարտիկի գործողությունները:

# ՑԵ. ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## Հրետանուց

*ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝*

1. Գիտենալ գնդային հրետանու մարտական գործողությունը:

2. Գիտենալ այն հիմնական օբյեկտները, վորոնց դեմ հրետանին կրակ ե վարում:

3. Հասկացողություն ունենալ. —

ա) Նռնակի ու շրապնելի գործողության մասին.

բ) Հատուկ արկերի նշանակման մասին (քիմիական, հրդեհող, լուսատու, ծխատու, ագիտացիոն).

գ) շրապնելային գնդակների ու նռնակի բեկորների (կտորտանքի) հարվածման մակերեսի մասին:

4. Կարողանալ ընտրել տեղանքում հրետանային արկերի հարվածներից պաշտպանող բնական ծածկարաններ:



5. Կարողանալ վերաբերվել չպայթած արկի հետ:

6. Կարողանալ անմարտունակ դրության հասցնել հրանոթը (փչացնել հրանոթը):

*ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ* — նույնն ե, ինչ և մարտիկների համար: Բացի դրանից,

1. Կարողանալ պահպանել իր ուժերն ու միջոցները հրետանու կրակի տակ:

2. Գիտենալ իր հրետանուն օգնելու վերաբերյալ պարտականությունները (խնամքով վերաբերմունք դեպի կապի միջոցները, օգնություն ցույց տալը դժվար տեղերից անցնելու ժամանակ, օգնություն հրետանու հանկարծակի գրոհի դեպքում):

3. Կարողանալ ցույց տալ հրետանուն նշանը տեղական առարկաներով:

4. Գիտենալ հրանոթն անպետք դարձնելու միջոցները:

Ավտոզրահատանկային գործից

ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Գիտենալ մարտական մեքենաների նշանակումը, նրանց ուրվագծերը (կոնտուրները), չափերը (մանավանդ տանկետկայի և Տ 26 տանկի վերաբերյալ):

2. Գիտենալ, թե ինչով են սպառազինված՝ վո՛ր մարտական մեքենաները և կրակի գործողությունը:

3. Գիտենալ, թե ինչ հեռավորությունների վրա զենքի (հետևակային զենքի) ի՛նչ տեսակներով կարելի յե ծակել զրահամեքենաների զրահը և վո՞ր տիպի մարտական մեքենաների զրահը:

4. Ի՞նչպիսի խոչընդոտներ են հաղթահարում մարտական մեքենաները և ի՞նչպիսին վոչ:

5. Գիտենալ տանկետկայի ու տանկի հետ համագործակցելու կանոնները:

6. Գիտենալ տանկի դեմ կռվելու հիմնական պահանջները:



բ) ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Նույնը, ինչ կարմիր բանակային կազմի համար և բացի դրանից՝ գիտենալ ու կարողանալ գործադրել ազդանշանները մեխանիկական մասերի հետ:

2. Գիտենալ տանկետկայի, Տ 26 տանկի և Տ 24 տանկի, ԲՏ անվավոր-թրթուրային տանկի և Դ 8,12 զրահավտոմոբիլի ամփոփ նկարագրությունը:

3. Գիտենալ տանկային դասակի, վաշտի կազմակերպումը:

Ավիոտեխնիկայից

ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Տարբերել ուրվանկարներով (սիլուետներով) կործանիչ, գրոհող, ռմբակոծող սավառնակները (ընդամենը 3 սավառնակի ուրվանկար):

2. Գիտենալ, թե ինչ տեսակ ավիացիայից և մարտիկներին անմիջական վտանգ սպառնում. գնդացրային կրա-

կով, ամրակոծումով, քիմիական թունավորումով (առանց ուսումնասիրելու տեխնիկական, տակտիկական հատկությունները):

բ) ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Այն ամենը, ինչ սովորական մարտիկների համար:

2. Գիտենալ հակառակորդի սավառնակի ընդացրային սպառազինման հատկությունը՝ հակառակորդի գետին իջած սավառնակի դեմ պայքարելու տեսակետից:

### Կապի տեխնիկայից

ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Ցուցադրել հետևակի ստորաբաժանումների համար՝ սկսած վաշտից և ավելի ցածր՝ նշաններն ու ազդանշանները (Հետևակի Մարտական Կանոնադիրք մասն 1-ին, հավելված № 1) և զրահատանկային ստորաբաժանումների ազդանշանները հետևակի հետ կապի համար:



2. Կարողանալ փռել քաթանները ավիացիայի համար, որոնք նշում են պաշտպանության առաջին յեզրը:

3. Գիտենալ լրատարի ծառայությունը (փոխանցել գրավոր ու բանավոր հրամաններ):

4. Կարողանալ օգտվել դաշտային հեռախոսից (խոսել հեռախոսով) և պարզ միջոցներով շտկել հեռախոսաթելի կտրվածքները:

5. Իմանալ հեռախոսաթել անցկացնելու հիմնական կանոնները:

6. Հասկացողություն ունենալ ընդհ. կապի բոլոր միջոցների մասին, տարբերել կապի մի միջոցը մյուսից և նրանց գործադրության դեպքերը:

բ) ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Այն բոլորը, ինչ կարմիր բանակայինների համար է.—

2. Գիտենալ ՈւՆԱՖ հեռախոսի տակտիկական ու տեխնիկական հատկությունները:

3. Կարողանալ հեռախոսով ներկըցվել գծին:



1-329

Ճարտարապետական գործից

ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Գիտենալ հրաձիգ վաշտի ռազմաճարտարապետական ցուցակային (տաբելային) գույքը։

2. Կարողանալ փոքր ամրաշինական գործիքով կատարել ամենապարզ պաշտպանական կառուցվածքներ, պաշտպանությանը հարմարեցնել տեղական առարկաները և հակառակորդից գրաված խրամատներն ու խրամուղիները։

3. Կարողանալ կառուցել լարափակոցներ, խափանումներ, խաչմերուկներ և դնել հակատանկային ականներ։

4. Կարողանալ օգտագործել քողարկ-խալաթը, քողարկ-հագուստեղենը, քողարկ-կողղակները, քողարկ-գորգերը։

Հեծելազորի համար լրացուցիչ կերպով գիտենալ պայթուցիկ նյութերի նշանակումը, տեսակներն ու հատ-



կությունները և պայթյունի համար պատկանելիքները, կարողանալ բարձել պայթյունի գրաստաբեռ։

բ) ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ՝

1. Ճանապարհների, կամուրջների ու գետերի հետախուզությունն՝ վորոշելու համար իրենց գործի տեսակն, անցնելու համար նրանց պետքական լինելը։

2. Ջոկով ամենապարզ խափանումներ կառուցելը (անտառային խափանումներ, շարժական արգելքներ, ձեռքի նռնակներից կապոցներ պատրաստելը)։

3. Հակառակորդի պաշտպանողական շերտի հետախուզությունը վորոշելու համար հակառակորդի կրակային կետերի խափանումների ու կառուցվածքների տեղն ու բնույթը։

4. Հաղթահարել խափանումները և հակառակորդի արհեստական խոչընդոտներում անցքեր բանալ։

Քիմիական պատրաստությունից

**ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝**

1. Գիտենալ թունավոր նյութերի ու ծխանյութերի հիմնական հատկությունները:

2. Գիտենալ և կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցները (սարքին ու անսարքին հակագազեր, պաշտպանական թիկնոց, ձիու ու հեծելազորի պաշտպանությունը հեծյալ զորամասերում, ստորաբաժանումներում ու հրետանում):

3. Կարողանալ կատարել նյութական մասի, զենքի ու հանդերձանքի գազահանումը կայուն թունավոր նյութերից:

4. Կարողանալ վորոշել վարակված տեղամասի սահմանները և գտնել շրջանցող ուղիներ:

5. Ճանաչել թունավոր ծխագլանները և չեզոքացնող ծուխը և կարո-



ղանալ պատրաստվել ծուխ բաց թողնելուն:

6. Գիտենալ վարակված տեղամասերի հաղթահարման համար տեխնիկական ու ձեռքի տակի միջոցները:

7. Կարողանալ կրակ վարել ծխի մեջ, շարժվել ծխի միջով և ծխածածկույթի յետևից:

8. Տիրապետել պաշտպանության, հետախուզության տեխնիկային ու գազահանման անհատական միջոցներին:

**բ) ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ՝**

1. Այն, ինչ սովորական կազմի համար, բացի դրանից՝ ուսումնասիրել քիմիական հարձակման ու պաշտպանության այն միջոցները, վորոնք գտնվում են իրենց զորամասի սպառազինման վրա. գիտենալ նրանց տեխնիկական հատկությունները և կարողանալ օգտվել նրանցից ձմրան ուսուցման համար տված նորմայական ցուցանիշների սահմաններում:

2. Տիրապետել վարակված տեղամասերի հաղթահարման հմտությա-

նը, պաշտպանական շուլպաների, թիկնոցների, ինչպես նաև ջոկի ունեցած միջոցների ոգնությամբ։

3. Կարողանալ ջոկով (հրանոթային ու գնդացրային համբանքով) մարտ մղել վարակված տեղամասում։

### Հակոդային պաշտպանության տեխնիկայից

**ա) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝**

1. Յուրացնել ոդային տագնապի սահմանված ազդանշանը։

**բ) ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ՝** բացի դրանից՝

1. Կարողանալ ճանաչել սավառնակը և վորոշել նրա տիպը։
2. Կարողանալ կազմել «ՈԴ» զեկուցագիրը։
3. Կարողանալ առաջ տանել նշանառության կետը և վորոշել նշանոցը՝ սավառնակի դեմ հրացանով ու ձեռքի գնդացրերով կատարած հրաձգության ժամանակ։



## Զ. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝**

Վոչ պակաս, քան «լավ» գնահատականով գիտենալ և կատարել ժամապահի պարտականությունները, գիտենալ և կատարել պահակում ներքին կարգ ու կանոնը։

**ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ՝**

Վոչ պակաս, քան «լավ» գնահատականով գիտենալ և կատարել փոխադրի ու պահակապետի պարտականությունները, գիտենալ և ստույգ կատարել պահակային ծառայության կանոնագրքի բոլոր պահանջները։

Սովորեցնել իր մարտիկներին ժամապահի ծառայությունը կրելու յուրացումն ու հմտությունը և պահակում ներքին կարգ ու կանոնի կատարումը։

## Ե. ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

1. Ոչ պակաս, քան «լավ» գնահատականով գիտենալ և ստույգ կատարել ներքին վերակարգի անձանց պարտականությունները վաշտում։

2. Ոչ պակաս, քան «լավ» գնահատականով պահպանել մաքրություն ու անձնական առողջապահությունը։

Կրտսեր հրամանատարների համար.

1. Ոչ պակաս քան «լավ» գնահատականով գիտենալ և ստույգ կատարել վաշտում օրվա վերակարգի անձանց պարտականությունները։

2. Սովորեցնել և ցույց տալ մարտիկներին այդ պարտականությունների օրինակելի կատարումը։

3. Սովորեցնել և ցույց տալ մարտիկներին մաքրության և անձնական առողջապահության պահպանումը։

4. Ճանաչել իր ստորադրյալներին և վարել նրանց հաշվառումը։



## Ը. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԻՑ

### 1. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ակտիվ պայքար սոցսեփականության խնամման համար, անփույթ վերաբերմունքի ոչ մի դեպք դեպի տեխնիկան, զենքը։ Ճշտապահ օգտագործում և հոգատար վերաբերմունք դեպի ոտնամանը, հագուստեղենը և սննդամթերքը։

### 2. ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Բացի դրանից՝ հոգատար վերաբերմունք դեպի կարմիր բանակայինի անհատական կարիքները։

պատրաստության բաժնի պետ՝

ԿԿԲ Շտաբի մարտական

ԿԵՎԼԻՇՎԻԼԻ

ԿԿԲ Քաղվարչության 2-րդ սեկտորի պետ՝ ԲԱՐԲԱՐԻՆՍԿԻ

---

I
3297

Սրբագրեց՝ Հ. ՄԱԹԻԿՅԱՆ

Պետհրատի Տպարան 1933 Երեվան

Գլ՝ 70 Պատվ. 769 տիրաժ 500

ՀՀ Ազգային գրադարան
NL0937225